ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

16.03.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-100/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.06.2015թ. թիվ 1/73-1/16364-15 և 15.02.2016թ. թիվ 1/73-3/5293-16 գրություններով ներկայացված «Մագնատես» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02258158) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-100/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-100/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 14.03.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, 23.06.2015թ. թիվ 1/73-1/16364-15 և 15.02.2016թ. թիվ 1/73-3/5293-16 գրություններով, դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Մագնատես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի 16.06.2015թ. թիվ 18/6-57-38, 10.02.2016թ. թիվ 08/18/432-16 և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 22.06.2015թ. թիվ 01/13.1/1593-15 գրությունները և կից փաստաթղթերի պատճենները:

2. «Մագնատես» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 18.02.2016թ. և 26.02.2016թ. գրություններով դիմել է «Մագնատես» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի գրությանը՝ Ընկերությունը գրությամբ հայտնել է, որ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարած «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/22 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու օրվա դրությամբ (25.05.2015թ.) ընկերությունն ունեցել է 1 125 407 ՀՀ դրամ հարկային պարտավորություն շահութահարկի և եկամտահարկի մասով և 1 824 000 ՀՀ դրամ գերավճար՝ ԱԱՀ-ի մասով: Համախառն հաշվարկով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ «Մագնատես» ՍՊԸ-ն ունեցել է 698 593 ՀՀ դրամ դրական հաշվեկշիռ:

Օրենքի պահանջը՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորություններ չունենալու վերաբերյալ, «Մագնատես» ՍՊԸ-ի կողմից ընկալվել է համախառն հաշվեկշռի տարբերակով: Այս պահի դրությամբ վճարվել է վերը նշված 1 125 407 ՀՀ դրամ հարկային պարտավորությունը և առկա է գերավճար ԱԱՀ-ի մասով:

Ընկերությունը նշել է, որ տեղի ունեցածը թյուրիմացություն է և խնդրել է չներառել «Մագնատես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Մագնատես» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 19.12.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-100/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը 22.06.2015թ. թիվ 01/13.1/1593-15 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/22» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միևնույն ժամանակ, Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով վերջինս հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, որին ի պատասխան ստացվել է եզրակացություն, որի համաձայն՝ «Մագնատես» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու ներկայացնելու օրվա դրությամբ (25.05.2015թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Պատվիրատու 1-ը, պատշաճ ծանուցված լինելով 19.12.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-100/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՔԿԴ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ

ՀՀ քննչական կոմիտեն 16.06.2015թ. թիվ 18/6-57-38 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՔԿԴ-15/1» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միևնույն ժամանակ, Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով վերջինս հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, որին ի պատասխան ստացվել է եզրակացություն, որի համաձայն՝ «Մագնատես» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու ներկայացնելու օրվա դրությամբ (02.06.2015թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 1 125 407 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Պատվիրատու 2-ը, պատշաճ ծանուցված լինելով 19.12.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-100/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-100/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 23.06.2015թ. թիվ 1/73-1/16364-15 և 15.02.2016թ. թիվ 1/73-3/5293-16 գրություններով ներկայացված «Մագնատես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ

□«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) մասնակցելու նպատակով «Մագնատես» ՍՊԸ-ն ***25.05.2015թ.*** հայտ է ներկայացրել:

□Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային***

պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատու 1-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 04.06.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Մագնատես» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին 17.06.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մագնատես» ՍՊԸ-ն 2015թ. մայիսի 25-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 112 647 ՀՀ դրամի չափով:

Կենտրոնը 07.02.2017թ. թիվ 01/04.1/360-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին և խնդրել է «Մագնատես» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հարցն ուսումնասիրելու նպատակով Կենտրոնին հայտնել տեղեկատվություն Ընկերության կողմից 25.05.2015թ. (հայտը ներկայացնելու օրվա) դրությամբ ***ժամկետանց*** հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 23.02.2017թ. թիվ 1/6-1/5580-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում 25.05.2015թ. դրությամբ «Մագնատես» ՍՊԸ-ն 25.05.2015թ. դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 844 798 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որից՝ շահութահարկի գծով՝ 681 843 ՀՀ դրամ, եկամտային հարկի գծով՝ 162 798 ՀՀ դրամ, իսկ ավելացված արժեքի հարկի գծով Ընկերության իրական գերավճարը կազմում է 448 903 ՀՀ դրամ:

Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 18.06.2015թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշել է «Մագնատես» ՍՊԸ-ի հայտը մերժել:

2. ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՔԿԴ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ

 ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված *«ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՔԿԴ-15/1»* ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միրջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) մասնակցելու նպատակով «Մագնատես» ՍՊԸ-ն ***02.06.2015թ.*** հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

 Պատվիրատու 2-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 05.06.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Մագնատես» ՍՊԸ-ի վերաբերյալ:

 Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին 12.06.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մագնատես» ՍՊԸ-ն 2015թ. հունիսի 2-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 125 407 ՀՀ դրամի չափով:

 Կենտրոնը 07.02.2017թ. թիվ 01/04.1/360-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին և խնդրել է «Մագնատես» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հարցն ուսումնասիրելու նպատակով Կենտրոնին հայտնել տեղեկատվություն Ընկերության կողմից 02.06.2015թ. (հայտը ներկայացնելու օրվա) դրությամբ ***ժամկետանց*** հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ:

 ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 23.02.2017թ. թիվ 1/6-1/5580-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում 02.06.2015թ. դրությամբ «Մագնատես» ՍՊԸ-ն 02.06.2015թ. դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 854 452 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որից՝ շահութահարկի գծով՝ 689 673 ՀՀ դրամ, եկամտային հարկի գծով՝ 164 779 ՀՀ դրամ, իսկ ավելացված արժեքի հարկի գծով Ընկերության իրական գերավճարը կազմում է 448 903 ՀՀ դրամ:

6. ՍՑ-ԳԲԽ-100/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 14.03.2017թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության 23.06.2015թ. թիվ 1/73-1/16364-15 և 15.02.2016թ. թիվ 1/73-3/5293-16 գրություններով ներկայացված «Մագնատես» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02258158) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել՝ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերի բացակայության հիմքով:

7. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.06.2016թ. թիվ 23.06.2015թ. թիվ 1/73-1/16364-15 և 15.02.2016թ. թիվ 1/73-3/5293-16 գրությունները, ՀՀ քննչական կոմիտեի 16.06.2015թ. թիվ 18/6-57-38, 10.02.2016թ. թիվ 08/18/432-16 և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 22.06.2015թ. թիվ 01/13.1/1593-15 գրությունները և կից փաստաթղթերը՝ հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն***

անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ փվյալ***:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած

հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) մասնակցելու նպատակով «Մագնատես» ՍՊԸ-ն ***25.05.2015թ.*** հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

Մինչդեռ, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին 17.06.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի ***«Մագնատես» ՍՊԸ-ն 2015թ. մայիսի 25-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 112 647 ՀՀ դրամի չափով:***

Կենտրոնը 07.02.2017թ. թիվ 01/04.1/360-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին և խնդրել է «Մագնատես» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու

հարցն ուսումնասիրելու նպատակով Կենտրոնին հայտնել տեղեկատվություն Ընկերության կողմից 25.05.2015թ. (հայտը ներկայացնելու օրվա) դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 23.02.2017թ. թիվ 1/6-1/5580-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում 25.05.2015թ. դրությամբ ***«Մագնատես» ՍՊԸ-ն 25.05.2015թ. դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 844 798 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն***, որից՝ շահութահարկի գծով՝ 681 843 ՀՀ դրամ, եկամտային հարկի գծով՝ 162 798 ՀՀ դրամ, իսկ ավելացված արժեքի հարկի գծով Ընկերության իրական գերավճարը կազմում է 448 903 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ «Մագնատես» ՍՊԸ-ի կողմից 25.05.2015թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

2. ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՔԿԴ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ

ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված *«ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՔԿԴ-15/1»* ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միրջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) մասնակցելու նպատակով «Մագնատես» ՍՊԸ-ն ***02.06.2015թ.*** հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

Մինչդեռ, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին 12.06.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մագնատես» ՍՊԸ-ն

2015թ. հունիսի 2-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 125 407 ՀՀ դրամի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ «Մագնատես» ՍՊԸ-ի կողմից 02.06.2015թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Ընկերությունը Կենտրոնին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարած «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/22 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու օրվա դրությամբ (25.05.2015թ.) ընկերությունն ունեցել է 1 125 407 ՀՀ դրամ հարկային պարտավորություն շահութահարկի և եկամտահարկի մասով և 1 824 000 ՀՀ դրամ գերավճար՝ ԱԱՀ-ի մասով: Համախառն հաշվարկով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ «Մագնատես» ՍՊԸ-ն ունեցել է 698 593 ՀՀ դրամ դրական հաշվեկշիռ:

Ընկերությունը նշել է, որ տեղի ունեցածը թյուրիմացություն է և խնդրել է չներառել «Մագնատես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կենտրոնը 07.02.2017թ. թիվ 01/04.1/360-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին և խնդրել է «Մագնատես» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հարցն ուսումնասիրելու նպատակով Կենտրոնին հայտնել տեղեկատվություն Ընկերության կողմից 25.05.2015թ. և 02.06.2015թ. (հայտերը ներկայացնելու օրերի) դրությամբ ***ժամկետանց*** հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 23.02.2017թ. թիվ 1/6-1/5580-17 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ***«Մագնատես» ՍՊԸ-ն 25.05.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 844 798 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն***, որից՝ շահութահարկի գծով՝ 681 843 ՀՀ դրամ, եկամտային հարկի գծով՝ 162 798 ՀՀ դրամ, իսկ ***02.06.2015թ. դրությամբ՝ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունի 854 452 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն***, որից՝ շահութահարկի գծով՝

689 673 ՀՀ դրամ, եկամտային հարկի գծով՝ 164 779 ՀՀ դրամ, իսկ ավելացված արժեքի հարկի գծով Ընկերության իրական գերավճարը կազմում է 448 903 ՀՀ դրամ

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Մագնատես» ՍՊԸ-ի կողմից «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում 25.05.2015թ. և ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված *«ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՔԿԴ-15/1»* ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միրջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում 02.06.2015թ. ներկայացրած հայտերի N 2 հավելվածներով ներկայացված հայտարարությունները հանդիսանում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Անհրաժեշտ է նշել, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

□*նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*

□ *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Մագնատես» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***25.05.2015թ***. մասնակցելով «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/22» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, այնուհետև ***02.06.2015թ.*** կրկին հայտ է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված *«ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՔԿԴ-15/1»* ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, որի ընթացքում նույնպես թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ ***որակավորման չափանիշները*** կամ տեխնիկական բնութագրերը ***որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 23.06.2015թ. թիվ 1/73-1/16364-15 և 15.02.2016թ. թիվ 1/73-3/5293-16 գրություններով ներկայացված «Մագնատես» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02258158) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

Անդամ՝ **Արմինե Նամալյան**